ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

~~N 1017-Ա/2,~~ **10.08.2020թ.**

«ՇԱՐԼ ԱԶՆԱՎՈՒՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ «ՄԵԾՆ ՇԱՆՍՈՆՅԵ» ԽՈՐԱԳՐՈՎ ԱՌՑԱՆՑ ՀԱՄԵՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝ Շարլ Ազնավուրին նվիրված «Մեծն Շանսոնյե» խորագրով առցանց համերգի կազմակերպման նպատակով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել Շարլ Ազնավուրին նվիրված «Մեծն Շանսոնյե» խորագրով առցանց համերգի կազմակերպման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1168. Արվեստների ծրագրի» «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման համար (տող՝ «Աջակցություն այլ մշակութային միջոցառումների և ծրագրերի իրականացմանը») Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված գումարներից հատկացնել

4080,0 (չորս միլիոն ութսուն հազար) հազար դրամ՝ Շարլ Ազնավուրին նվիրված «Մեծն Շանսոնյե» խորագրով առցանց համերգի կազմակերպման ծախսերն ապահովելու համար:

3. Նախարարության ֆինանսաբյուջետային վարչության պետին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում նախապատրաստել և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարողի ստորագրմանը ներկայացնել սույն հրամանի 2-րդ կետում նշված գումարը «Հայաստանի երգի պետական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակեր-պությանը հատկացնելու մասին պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

4. Նախարարության ժամանակակից արվեստի և ֆինանսաբյուջետային վարչությունների պետերին՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մարտի 16-ի թիվ 343-Ա/2 հրամանին և կնքվող պայմանագրին համապատասխան իրականացնել պայմանագրի կատարման նկատմամբ հսկողություն, պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման, բովանդակային և ֆինանսական հաշվետվությունների ընդունման և պայմանագրով նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունների կազմման և ստորագրման գործառույթները:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Խզմալյանին:

Նախարար Արայիկ Հարությունյան

X

Հավելված
ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
10 օգոստոսի 2020 թ.
N 1017 Ա/2 հրամանի

ԾՐԱԳԻՐ

«Մեծն Շանսոնյե» խորագրով առցանց համերգի կազմակերպման

1	Կազմակերպության անվանում	«Հայաստանի երգի պետական թատրոն» ՊՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	Երևան, Խանջյան 13/1
3	Ծրագրի անվանում	«Մեծն Շանսոնյե» խորագրով առցանց համերգ
3.1	Բովանդակություն	«Մեծն Շանսոնյե» խորագրով առցանց համերգ՝ նվիրված աշխարհահռչակ Շառլ Ազնավուրին: Վիրտուալ համերգը հեռարձակվելու է Շանսոնյեի հայրենիքից՝ Հայաստանից, որտեղ հայ հայտնի և սիրված երիտասարդ երգիչներն ու երգչուհիները նվիրելու են այս համերգը մեծ երգչին՝ կատարելով իր ստեղծագործությունները;
3.2	Նպատակ	Շառլ Ազնավուրի արվեստի տարածում ամբողջ աշխարհում:
3.3	Անցկացման ժամկետ	Սեպտեմբեր, 2020
3.4	Անցկացման վայր	Հանրային Հեռուստաընկերությամբ եթեր և առցանց հեռարձակում
3.5	Ակնկալվող արդյունքներ	Թերևս 2016 թվականից «Քեզ համար, Ազնավուր» խորագրով նախագծի շարունակական կազմակերպում: Երիտասարդ արտիստների և երաժիշտների ներգրավում առցանց տարբերակով համերգի անցկացման մեջ՝ հաշվի առնելով պանդեմիայով ստեղծված իրավիճակը:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	1 համերգ, մոտավորապես՝ 80-120 հազար դիտում